ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ

«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Գիտատեխնիկական գրադարանային ծառայությունների մատուցման որակի բարելավման, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման նպատակով ՆՁԱԿ-ում և նրա մասնաճյուղերում 2016-2018թթ. իրականացվել են տեխնիկական վերազինման որոշ աշխատանքներ: Պետ. բյուջեից հատկացված գումարներից 2016թ. շուրջ 279.0 հազ. դր. գումար է հատկացվել համակարգչային տեխնիկայի և պատճենահանող, տպող սարքավորումների վերանորոգմանը՝ վերջիններիս կանոնավոր շահագործումն ապահովելու նպատակով,2017թ.՝ շուրջ 439.5 հազ. դր., իսկ 2018թ. շուրջ 821.5 հազ. դր., որից 490 հազ.դր.՝ ի հաշիվ տնտ. պայմանագրային միջոցների, ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա:

Կարևորելով հանրությանը մատուցվող գրադարանային-տեղեկատվական սպասարկման ծառայություններում ընթերցողական պահանջմունքների բավարարմանն ուղղված առաջնահերթ խնդիրը, գրադարանի ֆոնդերը հնարավորինս համալրվել են՝ ելնելով անընդհատության և շարունակականության սկզբունքներից և հաշվի առնվել բաժանորդագրությանը հատկացվող ֆինանսական միջոցների տարեցտարի նվազող դինամիկան: Այսպես. 2016թ. ձեռք է բերվել 1264 օրինակ գրականություն, որից 643-ը նվիրատվությամբ, իսկ 621-ը բաժանորդագրությամբ /շուրջ 6588.3 հազ. դրամ/: 2017թ. ձեռք է բերվել 1289 օրինակ գրականություն, որից 767-ը նվիրատվությամբ, իսկ 522-ը բաժանորդագրությամբ /շուրջ 5107.4 հազ. դրամ/: 2018թ. ձեռք է բերվել 1238 օրինակ գրականություն, որից 862-ը նվիրատվությամբ, իսկ 376-ը բաժանորդագրությամբ /շուրջ 3448.5 հազ. դրամ/:

Հատկանշական է, որ ՌԴ “Информнаука” կազմակերպության հետ կնքված պայմանագրի շնորհիվ գրադարանը կարողացել է միևնույն ֆինանսական միջոցներով շուրջ 2.5 անգամ ավելի գրականություն ձեռք բերել, քան հնարավոր էր Հանրապետության բաժանորդագրական գործակալությունների միջոցով: Նույնիսկ այս պարագայում գրադարանը 2017թ. կարողացել է բաժանորդագրվել տարեկան ընդամենը 56 անուն/542 օրինակ ամսագրեր /5107363դրամ արժողությամբ/, իսկ 2018թ.՝ ընդամենը 27 անուն/376 օրինակ ամսագրեր /3448451դրամ արժողությամբ/

2015-2017թթ. բացահայտվել են 151 առավել բարձր ցիտման ինդեքս ունեցող հայ հեղինակներ և կազմվել նրանց կողմից հրապարակված 208 նոր հոդվածների ցանկը, որի արդյունքում ներբեռնվել և գրադարանի հավաքածուն համալրվել է 109 հոդվածներով: Բացի այդ, գիտատեխնիկական ժառանգության թվանշայնացման և էլեկտրոնային գրադարանի ձևավորման խնդրից ելնելով՝ ներբեռնվել են նաև սոցիոլոգիայի, էկոնոմիկայի, էլեկտրոնիկայի, պոլիգրաֆիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, սննդի արդյունաբերության, երկրաֆիզիկայի, ստանդարտացման, բարձրագույն մաթեմատիկայի և այլ ոլորտների վերաբերյալ համապատասխանաբար՝ 119/151/116 լիատեքստ էլեկտրոնային գրքեր: 31.12.2018թ. դրությամբ ներբեռնվել է շուրջ 1486 անուն էլեկտրոնային գիրք:

ՆՁԱԿ-ում և նրա տարածաշրջանային բաժանմունքներում շահառուների գրադարանային-տեղեկատվական սպասարկումը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ կազմակերպելու նպատակով ներդրված է գրադարանային գործընթացների ավտոմատացման ԻՐԲԻՍ-64 համակարգը, որում մուտքագրված /ներառյալ ամսագրերի գիտատեխնիկական հոդվածների վերլուծական նկարագրությունները/ գրառումների թիվը կազմում է շուրջ 263 հազ. փաստաթուղթ /առ 01.01.2019թ./: Էլեկտրոնային գրացուցակ մուտքագրված գրառումների տարեկան միջին թիվը կազմում է շուրջ 16000: Գրադարանը մասնակցություն է ունեցել Հայաստանի համահավաք էլ. քարտարանի ձևավորման աշխատանքներին՝ օգտագործելով ԱԼԵՖ ծրագիրը: Առ 01.01.2018թ. կատարվել է շուրջ 87,5 հազ. անուն գրառում:

Գրադարանը մասնակցել է Հայաստանի ազգային գրադարանի կողմից ձևավորվող (համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի «Հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարանների ստեղծում» գերակա խնդրի) «Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանում 1963-2008թթ. հրատարակված «Գիտություն և տեխնիկա» գիտահանրամատչելի

հանդեսի թվայնացման աշխատանքներին: Կատարվել է 1963-1990թթ. թողարկումների 15270 էջի մշակում:

ԻՐԲԻՍ-64 համակարգում ամսագրերի գիտատեխնիկական հոդվածների վերլուծական նկարագրությունների մուտքագրման շնորհիվ իրականացվում է փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունը և շահառուների համար համապատասխան մատենագիտական ցանկերի և սինթետիկ-տեղեկատվական նյութերի պատրաստումը: Մասնավորապես փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայության միջոցով վերջին տարիներին իրականացվել է տեղեկատվական սպասարկում ՀՀ կառավարման մարմիններին, որոնց տրամադրվել են մասնագիտական ամսագրերի հոդվածների համառոտագրեր և ըստ անհրաժեշտության՝ նաև դրանց լիատեքստ տարբերակները:

2016-2018թթ. նշված ծառայության միջոցով համապատասխանաբար թվով 250/292/301 շահառուների /ցուցանիշի աճի դինամիկան պայմանավորված է պահանջարկի մեծացմամբ/ տրամադրվել է 53606/53405/55446 փաստաթուղթ, որից՝ 2251/1193/728 էջ լիատեքստ: Ընդլայնվել է նաև ծառայությունների մատուցման աշխարհագրությունը: Գիտատեխնիկական գրադարանային ցանցի համապատասխանաբար 66/70/87 գրադարանների տրամադրվել է տեղեկատվություն նոր ստացված գրականության վերաբերյալ: Կոլեկտիվ աբոնենտների թիվը կազմել է 190/214/187 կազմակերպություն:

Մասնաճյուղերը ներառյալ՝ համակարգչային սրահ հաճախումների թիվը կազմել է 1756/1873/2338: Շահառուները օգտվել են համապատասխանաբար թվով 25/30/37 միջազգային ՏԲ-ներից, որոնց հաճախումները կազմել են 118/134/114:

Կենտրոնում 2016-2018թթ. պարբերաբար իրականացվել են տեղեկատվության նպատակային օգտագործման արդյունավետությանն ուղղված թրենինգներ, կլոր սեղաններ, սեմինարներ, ինչպես նաև գրականության թեմատիկ ցուցահանդեսներ և բազմապիսի այլ միջոցառումներ /թվով 28/32/34 միջոցառում, որոնց մասնակցել են 1397/1624/813 շահառուներ/, գրքի թվով 67/75/70 ցուցահանդեսներ:

Օգտվողների պատվերով 2016-2018թթ. կատարվել են համապատասխանաբար թվով 214/352/396 թեմատիկ որոնումներ և կազմվել 57/64/61 մատենագիտական ցանկեր: Տրամադրվել են նաև տեղեկատվական-խորհրդատվական ծառայություններ: Թեմատիկ որոնումների և մատենագիտական ցանկերի ցուցանիշների փոփոխման դինամիկան բնականոն է և պայմանավորված է շահառուների կողմից գրադարանի էլեկտրոնային որոնողական ապարատի առավել արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև Ինտերնետում վերջինիս հասանելիությամբ:

Պետք է նշել, որ բաժանորդագրությանն ուղղված ոչ բավարար ֆինանսական միջոցները պայմանավորում են տացքի նվազ ցուցանիշներ: 2016-2018թթ. ընթերցողների թիվը կազմել է համապատասխանաբար 6433/6764/7162 օգտվող, հաճախումների թիվը՝ 12305/13402/14708 այցելություն, իսկ տացքը կազմել է 237580/166979/163539 տեղեկույթի սպասարկված միավոր:

Ընթերցողների սպասարկման գործընթացի կազմակերպման և գրականության ամրակայման ապահովման ուղղությամբ 2016-2018թթ. կատարվել են գրականության և ծառայությունների պատվիրաթերթիկների, հսկիչ և վերադարձի թերթիկների, ընթերցողական հաշվառման քարտերի, ընթերցողական տոմսերի, գույքագրման մատյանների, ինչպես նաև միկրոֆիլմերի և գրադարանային պատճենահանման, տպման աշխատանքներ, համապատասխանաբար՝ 17900/11857/21005 էջ, ֆոնդերի մաշված գրքերի վերանորոգման և այլ կազմարարական աշխատանքներ, համապատասխանաբար՝ 203/197/369 գիրք /տվյալ ցուցանիշը պայմանավորված է սանիտարական աշխատանքների ժամանակ ի հայտ բերված գրականությամբ/:

Ներկայացվում է իրականացվող ծրագրերի գծով 2016-2019թթ. զարգացման միտումները ֆինանսական ցուցանիշների մակարդակով:

2016-2018թթ. կատարված փաստացի ֆինանսական ծախսերը

հազար դրամ

Անվանում	2016թ. 91 հաստիք	2017 91 հաստիք	2018 85 հաստիք
Աշխատավարձ	127600.0	127600.0	118709.0
Գրականության ձեռքբերում	6399.8	3016.0	3000.0
Պահպանման ծախսեր	12682.1	12431.5	11933.0
Ընդամենը	146681.9	143047.5	133642.0

2019թ. ծախսերի նախահաշվի աղյուսակ
«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»

N	Ծախսերի անվանումը	Ընդամենը	այդ թվում՝			
			1-ին եռ.	1-ին կիս.	9 ամիս	տարի
1	Աշխատավարձ (85 հաստիք)	118709.0	21511.7	50550.8	81118.7	118709.0
2	Գրականության ձեռքբերում	3000.0	0	1500.0	1500.0	3000.0
3	Պահպանման ծախսեր	11933.0	3348.5	5572.4	8149.1	11933.0
4	ՀՀ պետական բյուջեի հատկացումների գծով հաշվարկված ԱԱՀ	26728.4	4972.0	11524.6	18153.6	26728.4
Ընդամենը		160370.4	29832.2	69147.8	108921.4	160370.4

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Նպատակները՝ Պետական աջակցություն գրադարաններին, մասնավորապես գիտատեխնիկական գրադարանային հավաքածուների պահպանություն և համալրում, մատչելիության ապահովում, գրադարանային-տեղեկատվական ծառայությունների շրջանակի ընդլայնում:

Թիրախները՝ գրադարանային հավաքածուների անխաթար պահպանումը, հանրության համար դրանց մատչելիության, ինչպես նաև համալրման անընդհատության ապահովումը: Գիտելիքի ձեռք բերման ժամանակակից գործիքների տրամադրումը: Գրադարանային ենթակառուցվածքների համաչափ բաշխվածության, մարզերում գործող գրադարանների բնականոն գործունեության, Երևանի և ՀՀ մարզերի միջև գոյություն ունեցող տարբերությունների վերացման գործընթացի ձեռնարկումը և միասնական քաղաքականության իրականացման, գրադարանային-տեղեկատվական ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Պետական աջակցություն գրադարաններին, մասնավորապես գիտատեխնիկական գրադարանային հավաքածուների պահպանություն և համալրում, մատչելիության ապահովում, գրադարանային-տեղեկատվական ծառայությունների շրջանակի ընդլայնում:	1162 «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»	Ձեռք բերված գիտատեխնիկական գրականություն	380	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Գրադարանային հավաքածուների պահպանությունը և համալրման անընդհատության ապահովումը:
		Համալրված էլեկտրոնային քարտարան	16000	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության թվայնացումը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացումը:
		Գրադարանային հիմնապաշարների միջին տացքի ապահովում	160000	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովումը, համայնքային գրադարանների զարգացումը:
		Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուներ	200	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:
		Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր:	40	Մեկ բյուջետային տարի	107%	Մեկ բյուջետային տարի	Մատենագիտական, վիճակագրական տվյալների, տեղեկատվական այլ ցանկերի կազմումն ու հրապարակումը:
		Օգտագործված միջազգային գրադարանային-տեղեկատվական բազաներ	25	Մեկ բյուջետային տարի	108%	Մեկ բյուջետային տարի	Միջազգային համագործակցության ընդլայնումը:
		Նոր գրականության ցուցահանդես	40	Մեկ բյուջետային տարի	110%	Մեկ բյուջետային տարի	Համաշխարհային և հայ ժողովրդի գրավոր ժառանգության հանրահռչակումը:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Գերակայությունները ներկայացնելիս հիմք են ընդունվել ՀՀ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 27.05.2014 թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական

ծրագիրը», ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշումով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիրը», «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշումը, ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագիրը:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Մշակութային ժառանգության պահպանություն, միասնական տեղեկատվական շտեմարանների և միացյալ ավտոմատացված ցանցի ստեղծում, մշակութային արժեքների թվանշայնացման գործընթացի խթանում, շարունակականության, մատչելիության ապահովում և հանրայնացում: Ժամանակակից մշակութային մրցունակ արտադրանքի ստեղծում: Մարզերում մշակութային ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովում. Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի հաշվառման, պահպանության, վերականգնման ապահովում. Մշակույթի համաչափ զարգացման քաղաքականության շարունակական իրականացում՝ մշակութային բարիքներից օգտվելու համահավասարության ու մատչելիության ապահովում. Աշխարհում հայ մշակույթի տեղորոշում ու հանրահռչակում, միջազգային կազմակերպություններին և կառույցներին Հայաստանի արդյունավետ ինտեգրում ու միջազգային հարթակներում Հայաստանի նպատակային դիրքավորում. Հայաստանի գրադարանային, թանգարանային և արխիվային միասնական տեղեկատվական բանկի ստեղծում, էլեկտրոնային կառավարման համակարգի և մշակութային կազմակերպությունների միջև էլեկտրոնային ներքին ցանցի մշակում: Հայկական ժառանգության էլեկտրոնային շտեմարանների ստեղծում - «Հայ պարբերական մամուլ» համահավաք էլեկտրոնային շտեմարանի ստեղծման մեկնարկ:	ՀՀ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության 27.05.2014 թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը», ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշումով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիրը», §Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշումը, ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագիրը:
Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական վիճակի բարելավում՝ միջին ամսական աշխատավարձի բարձրացման պայմանների ապահովմամբ: Մշակույթի բոլոր ոլորտներում կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման, վերաորակավորման նպատակային ծրագրերի իրականացում:	ՀՀ կառավարության 26.07.2012 թ. N 952-Ն որոշում, «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2010թ. հունվարի 14-ի «Մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման համալիր ծրագիրը հաստատելու մասին» N73-Ն որոշում:
Տեղեկատվական աջակցություն ՀՀ-ում պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման և իրականացման իրավական և տնտեսական հիմքերի կայացմանը՝ ինովացիոն գործունեության գերակայություններին համապատասխան: Ինովացիաների վերաբերյալ համապատասխան տեղեկատվական բազաների ձևավորում, խորհրդատվական ծառայությունների մատուցում:	ՀՀ կառավարության 27.05.2014 թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ ինովացիոն գործունեության Հայեցակարգ

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ: «Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ» միջոցառումը դիտարկվում է որպես պարտադիր պարտավորությունների մաս:

Պարտադիր ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է ստորև ներկայացված աղյուսակում.

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1162	11013	«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»	Հանրապետության գիտության և տնտեսության զարգացման գերակա ուղղություններին համապատասխան անհրաժեշտ գիտատեխնիկական գրականության ձեռք բերում, մշակում, դասակարգում, պահպանում և տարածում: Գրադարանային-տեղեկատվական մրցունակ համակարգերի ուսումնասիրում և ներդնում, առաջավոր փորձի փոխանակում և կադրերի վերապատրաստում:	Չնայած «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր» ծրագրով գործադիր մարմինը կարող է վերը նշված պարտադիր պարտավորությունների իրականացման հարցում ՀՀ օրենքներով և միջազգային պայմանագրերով իրեն վերապահել ծառայությունների մատուցման կարգի սահմանում, շահառուների կոնկրետ կատեգորիաների հստակեցում, տարեկան ֆինանսավորման չափերի որոշում և այլն, այնուամենայնիվ, դրանք չեն կարող վերաբերվել այդ պարտավորությունների դադարեցման շուրջ որոշումներին:	ՀՀ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» ՀՀ օրենքները:

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Հաշվի առնելով գերատեսչության հիմնական նպատակները և գերակայությունները՝ 2019-2022թթ. ողջ ժամանակահատվածում առաջնահերթությունը կտրվի շարունակական աշխատանքների հետևյալ ուղղություններին.

- գիտատեխնիկական գրադարանի պահպանման և համապատասխան գրականության ձեռք բերման միջոցով ավանդական գրադարանային-տեղեկատվական ծառայությունների,

գրականության նպատակային ցուցահանդեսների կազմակերպում, կադրերի վերապատրաստում,

- գրադարանային ֆոնդերի էլեկտրոնային գրացուցակի ձևավորման, համապատասխան տվյալների բազաների գեներացման միջոցով փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայության կազմակերպում: Համապատասխան միջազգային տվյալների բազաներ մուտքի ապահովում,
- վեբ-կայքի գործարկման միջոցով գրադարանային ծառայությունների մատչելիության ապահովում և հանրայնացում: Նորամուծության և ձեռներեցության լայն շրջանակներին, գիտատեխնիկական հանրությանը և կառավարման օրգաններին օպերատիվ լրատվության ապահովում, տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Ստորև ներկայացվում են շարունակական աշխատանքների կատարման կանխատեսվող արդյունքները, որոնք կնպաստեն վերը նշված ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը: Դրանք են՝

- շահառուների պահանջարկին համապատասխան ձեռք բերված և պահպանման տրված գիտատեխնիկական գրականության միջոցով սպասարկված, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումների մասնակցած գիտատեխնիկական հանրություն, գործարարներ, կենսաթոշակառուներ, ձեռնարկություններ և այլն: Մասնաճյուղերի ներգրավմամբ ապակենտրոնացված տեղեկատվական սպասարկում: Վերապատրաստման մասնակցած գիտատեխնիկական գրադարանների և մասնաճյուղերի գրադարանավարներ,
- փաստաթղթերի վերլուծական-սինթետիկ մշակման ենթակա և դրանց դասակարգման ու խորագրման աշխատանքների կենտրոնացման շնորհիվ էլեկտրոնային առաքման ծառայության միջոցով սպասարկված, ինչպես նաև միջազգային տվյալների բազաներից օգտված կոլեկտիվ բաժանորդներ, կառավարման օրգաններ և առանձին ֆիզիկական անձինք,
- պրոբլեմային ուղղվածության մասնագիտացված ՏԲ-ների ձևավորման, համապատասխան տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունների արդյունքում սպասարկված ինովացիոն գործընթացներում ընդգրկված գյուտարարներ, մասնագետներ, գիտնականներ, գործարարներ, ընկերություններ և այլն: Կենտրոնի վեբ կայքի գործարկման շնորհիվ մատուցվող ծառայությունների ընդլայնված աշխարհագրություն ՀՀ տարածքով:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համառոտ ներկայացվում է ոլորտի 2020-2022թթ. իրականացվելիք ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացվող եկամուտների աղբյուրները մաս 3-ի հավելված 7-ում, որոնք կառաջանան ավանդադրված գիտական աշխատանքներից, գիտատեխնիկական լրատվության սպասարկումից, գեներացվող տվյալների բազաների տրամադրումից, վճարովի ծառայությունների մատուցումից և վարձակալությունից:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Կենտրոնն ունի 4 մասնաճյուղեր Գյումրի, Հրազդան, Վանաձոր և Կապան քաղաքներում, որոնց գործունեությունը նպատակաուղղված է ՆՁԱԿ ՊՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունները ապակենտրոնացնել և ընդլայնել մարզերում: Այն կաջակցի հատկապես ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով հաստատված ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրերին՝ նպաստելով վերջիններիս գիտամշակութային միջավայրի համաչափ զարգացմանը:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր չեն նախատեսվում:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2020-2022 թթ ժամանակահատվածի համար պետական մարմնի պատասխանատվության ներքո գտնվող Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ ծրագրի գծով ֆինանսական պահանջների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացված է ՄԱՍ 3-ի հավելվածներ 10-ում և 11-ում:

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Չնախատեսված գնաճի հետևանքով տեղի կունենա բաժանորդագրության ծավալների կրճատում /քանի որ գրականությունը հիմնականում ձեռք է բերվում ՌԴ-ից/, որի արդյունքում կկրճատվեն հաճախումների և տացքի համապատասխան ցուցանիշները, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով սպասարկվող շահառուները:

N	Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը	Հնարավոր ազդեցությունը նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
	Չնախատեսված գնաճ	1	Բաժանորդագրության ծավալների կրճատում, հաճախումների և տացքի նվազում, կոլեկտիվ բաժանորդների, կառավարման օրգանների և առանձին ֆիզիկական անձանց սպասարկման քանակի նվազում և որակի անկում	Բաժանորդագրության համար նախատեսվող գումարների ավելացում

ՄԱՍ 3. ՄԺԾԾ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՅՏԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված N 1. Գոյություն ունեցող պարտավորությունների գծով ծախսակազմումների ամփոփ ձևաչափ

Ծրագիրը՝	*1162 «Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»*
Միջոցառումը՝	11013 *«Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»*
Միջոցառման հիմքում դրված ծախսային պարտավորության բնույթը՝	*«Պարտադիր ծախսերին դասվող միջոցառում»*

Աղյուսակ 1. Ծախսերի վրա ազդող ծախսային գործոնները

Ծախսային գործոնը և սպառվող (ծախսվող) ռեսուրսը	Գործոնի տեսակը	Չափի միավորը	Ստանդարտի (նորմատիվի) առկայությունը	Գործոնի կամ ռեսուրսի սպառման (ծախսման) մակարդակը					Հիմնավորումներ / Պատճառներ
				2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.	
Գնային և ոչ գնային գործոններ՝									
Աշխատավարձ	գնային գործոն	հազ.դրամ	ոչ	118709	118709	118709	118709	118709	
Գրականության բաժանորդագրություն	գնային գործոն	հազ.դրամ	ոչ	3000	3000	3000	3000	3000	
Պահպանման ծախսեր	գնային գործոն	հազ.դրամ	ՀՀիրավական ակտեր, որոնցով նախատեսած դրույթների և սահմա նված նորմաների հիման վրա պետք է հաշվարկվեն բյուջե տային ծախսերը	11933	11933	11933	11933	11933	
Հարկեր(ԱԱՀ)	գնային գործոն	հազ.դրամ	ՀՀհարկային օրենս գիրք	0	26728.4	26728.4	26728.4	26728.4	

Աղյուսակ 2. Ծախսերի ամփոփ հաշվարկը (առանց ծախսային խնայողությունների գծով առաջարկների ներառման)

Ծախսային տարրերը	<Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը>					<Լրացնել ծախսային գործոնի կամ սպառվող ռեսուրսի անվանումը և չափման միավորը>					Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)				
	2018թ. փաստ.	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.	2018թ. փաստ.	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.	2018թ. փաստ.	2019թ. բյուջե	2020թ.	2021թ.	2022թ.
Ընդամենը փոփոխության ենթարկված ծախսեր (հազ. դրամ), այդ թվում ըստ առանձին ծախսային տարրերի՝	X	X	X	X	X	X	X	X	X	X	0	160370.4	160370.4	160370.4	160370.4
Աշխատավարձ(հաստիք)	85	85	85	85	85	116.4	116.4	116.4	116.4	116.4	118709	118709	118709	118709	118709
Գրականության բաժա նորդագրություն(օրինակ)	380	380	380	380	380	7.89	7.89	7.89	7.89	7.89	3000	3000	3000	3000	3000
Պահպանման ծախսեր (հազ. դրամ),	1	1	1	1	1	11933	11933	11933	11933	11933	11933	11933	11933	11933	11933
Հարկեր(ԱԱՀ)(հազ. դրամ),	0	1	1	1	1	0	26728.4	26728.4	26728.4	26728.4	0	26728.4	26728.4	26728.4	26728.4
Ընդամենը փոփոխության չենթարկված ծախսեր (հազ. դրամ)	X	X	X	X	X	X	X	X	X	X	133642	133642	133642	133642	133642
ԸՆԴԱՄԵՆԸ (հազ. դրամ)	X	X	X	X	X	X	X	X	X	X	133642	160370.4	160370.4	160370.4	160370.4

Աղյուսակ 3. Ծախսային խնայողությունների գծով առաջարկները

Ծախսային խնայողությունների գծով առաջարկներ չի նախատեսվում:

1. Միջոցառման գծով ծախսային խնայողության վերաբերյալ առաջարկի բնույթը՝

☐ Կիրառվող ռեսուրսների սպառման ծավալների փոփոխություն

☐ Կիրառվող ռեսուրսների տեսակներում (համախմբությունում) փոփոխություն

☐ «Արտադրել - գնել» այլընտրանքի կիրառում

☐ Այլ (նկարագրել)՝_____

2. Նկարագրություն՝

3. Ծախսերի ամփոփ գնահատականը՝

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը	Միջոցառման գծով հաշվարկված ծախսերը (հազ. դրամ)			Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը (հազ. դրամ) (+/-)			Միջոցառման գծով ծախսերը (հազ. դրամ)		
	2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ
Աշխատավարձ	118709	118709	118709				118709	118709	118709
Գրականության բաժանորդագրություն	3000	3000	3000				3000	3000	3000
Պահպանման ծախսեր	11933	11933	11933				11933	11933	11933
Հարկեր(ԱԱՀ)	26728.4	26728.4	26728.4				26728.4	26728.4	26728.4
Ընդամենը	160370.4	160370.4	160370.4				160370.4	160370.4	160370.4

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի անվանումը	«ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն»

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները
Շահառուների պահանջարկին համապատասխան ձեռք բերված և պահպանման տրված գիտատեխնիկական գրականության միջոցով սպասարկված, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումների մասնակցած գիտատեխնիկական հանրություն, գործարարներ, կենսաթոշակառուներ, ձեռնարկություններ և այլն: Մասնաճյուղերի ներգրավմամբ ապակենտրոնացված տեղեկատվական սպասարկում: Վերապատրաստման մասնակցած գիտատեխնիկական գրադարանների և մասնաճյուղերի գրադարանավարներ: Փաստաթղթերի վերլուծական-սինթետիկ մշակման ենթակա և դրանց դասակարգման ու խորագրման աշխատանքների կենտրոնացման շնորհիվ էլեկտրոնային առաքման ծառայության միջոցով սպասարկված, ինչպես նաև միջազգային տվյալների բազաներից օգտված կոլեկտիվ բաժանորդներ, կառավարման օրգաններ և առանձին ֆիզիկական անձինք: Պրոբլեմային ուղղվածության մասնագիտացված ՏԲ-ների ձևավորման, համապատասխան տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունների արդյունքում սպասարկված ինովացիոն գործընթացներում ընդգրկված գյուտարարներ, մասնագետներ, գիտնականներ, գործարարներ, ընկերություններ և այլն: Կենտրոնի վեբ կայքի գործարկման շնորհիվ մատուցվող ծառայությունների ընդլայնված աշխարհագրություն ՀՀ տարածքով:
2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները
Փոփոխություններ չեն նախատեսվում:
3.Կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները
Կապիտալ բնույթի միջոցառումներ չեն նախատեսվում:
4. Ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումները
Ֆինանսական ակտիվների կառավարմանն առնչվող միջոցառումներ չեն նախատեսվում:

ՄԱՍ 2. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Դասիչ		Ծրագիր/Միջոցառում	2018թ. Փաստացի (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ (հազ. դրամ)	2021թ (հազ. դրամ)	2022թ (հազ. դրամ)
Ծրագիր							
1162		Ծրագրի անվանումը՝ ***«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»*** Ծրագրի նպատակը՝ Պետական աջակցություն գրադարաններին, մասնավորապես գիտատեխնիկական գրադարանային հավաքածուների պահպանություն և համալրում, մատչելիության ապահովում, գրադարանային-տեղեկատվական ծառայությունների շրջանակի ընդլայնում: Վերջնական արդյունքի նկարագրությունը՝ գրադարանային հավաքածուների անխաթար պահպանումը, հանրության համար դրանց մատչելիության, ինչպես նաև փոխանցման անընդհատության ապահովումը: Գիտելիքի ձեռք բերման ժամանակակից գործիքների տրամադրումը: Գրադարանային ենթակառուցվածքների համաչափ բաշխվածության, մարզերում գործող գրադարանների բնականոն գործունեության, Երևանի և ՀՀ մարզերի միջև գոյություն ունեցող տարբերությունների վերացման գործընթացի ձեռնարկումը և միասնական քաղաքականության իրականացման, գրադարանային-տեղեկատվական ծառայություններից օգտվելու մատչելիության ապահովումը:	*133642.0*	*160370.4*	*160370.4*	*160370.4*	*160370.4*
Ծրագրի միջոցառումներ							
		Ընթացիկ միջոցառումներ					
	11013	Միջոցառման անվանումը՝ ***«Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»*** Միջոցառման նկարագրությունը՝ Հանրապետության գիտության և տնտեսության զարգացման գերակա ուղղություններին համապատասխան անհրաժեշտ գիտատեխնիկական գրականության ձեռք բերում, մշակում, դասակարգում, պահպանում և տարածում: Գրադարանային-տեղեկատվական մրցունակ համակարգերի ուսումնասիրում և ներդնում, առաջավոր փորձի փոխանակում և կադրերի վերապատրաստում: Միջոցառման տեսակը՝ Ծառայությունների մատուցում	*133642.0*	*160370.4*	*160370.4*	*160370.4*	*160370.4*

ՄԱՍ 3. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Պետական աջակցություն գրադարաններին, մասնավորապես գիտատեխնիկական գրադարանային հավաքածուների պահպանություն և համալրում, մատչելիության ապահովում, գրադարանային-տեղեկատվական ծառայությունների շրջանակի ընդլայնում:	***«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»***	Ձեռք բերված գիտատեխնիկական գրականություն	380	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Գրադարանային հավաքածուների պահպանությունը և համալրման անընդհատության ապահովումը:
		Համալրված էլեկտրոնային քարտարան	16000	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության թվայնացումը և տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացումը:
		Գրադարանային հիմնապաշարների միջին տացքի ապահովում	160000	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովումը, համայնքային գրադարանների զարգացումը:
		Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուներ	200	Մեկ բյուջետային տարի	105%	Մեկ բյուջետային տարի	Հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում:
		Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր:	40	Մեկ բյուջետային տարի	107%	Մեկ բյուջետային տարի	Մատենագիտական, վիճակագրական տվյալների, տեղեկատվական այլ ցանկերի կազմումն ու հրապարակումը:
		Օգտագործված միջազգային գրադարանային-տեղեկատվական բազաներ	25	Մեկ բյուջետային տարի	108%	Մեկ բյուջետային տարի	Միջազգային համագործակցության ընդլայնումը:
		Նոր գրականության ցուցահանդես	40	Մեկ բյուջետային տարի	110%	Մեկ բյուջետային տարի	Համաշխարհային և հայ ժողովրդի գրավոր ժառանգության հանրահռչակումը:

ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
1162	*«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»*

Ծրագրի միջոցառումները

Ծրագրի դասիչը՝	*1162*	Ցուցանիշներ					
Միջոցառման դասիչը՝	*11013*	2018թ. փաստացի	2019թ սպասվող	2020թ	2021թ	2022թ	*<Լրացնել միջոցառման ավարտի տարեթիվը>*
Միջոցառման անվանումը՝	*«Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»*						
Նկարագրությունը՝	Հանրապետության գիտության և տնտեսության զարգացման գերակա ուղղություններին համապատասխան անհրաժեշտ գիտատեխնիկական գրականության ձեռք բերում, մշակում, դասակարգում, պահպանում և տարածում: Գրադարանային-տեղեկատվական մրցունակ համակարգերի ուսումնասիրում և ներդնում, առաջավոր փորձի փոխանակում և կադրերի վերապատրաստում:						
Միջոցառման տեսակը՝	Ծառայությունների մատուցում						
Միջոցառումն իրականացնողի անվանումը	*«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ*						
Արդյունքի չափորոշիչներ							
Քանակի չափորոշիչ	Ձեռք բերված գիտատեխնիկական գրականություն	376	380	405	405	405	Շարունակական
	Համալրված էլեկտրոնային քարտարան	17410	16000	16800	16800	16800	Շարունակական
	Գրադարանային հիմնապաշարների միջին տացքի ապահովում	163539	160000	168000	168000	168000	Շարունակական
	Փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայությունից օգտվող շահառուներ	301	200	210	210	210	Շարունակական
	Պատրաստված մատենագիտական ցանկեր, սինթետիկ տեղեկատվական նյութեր:	61	40	43	43	43	Շարունակական
	Օգտագործված միջազգային գրադարանային-տեղեկատվական բազաներ	49	25	27	27	27	Շարունակական
	Նոր գրականության ցուցահանդես	70	40	44	44	44	Շարունակական
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		133642	160370.4	160370.4	160370.4	160370.4	

Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	2018թ փաստ. (հազ. դրամ)				2019թ սպասվող (հազ. դրամ)				2020թ բյուջե (հազ. դրամ				2021թ բյուջե (հազ. դրամ)				2022 թ բյուջե (հազ. դրամ)			
		Ընդամենը	Աշխատակազմ	Պահպանման ծախսեր	ԱՄՀ	Ընդամենը	Աշխատակազմ	Պահպանման ծախսեր	ԱՄՀ	Ընդամենը	Աշխատակազմ	Պահպանման ծախսեր	ԱՄՀ	Ընդամենը	Աշխատակազմ	Պահպանման ծախսեր	ԱՄՀ	Ընդամենը	Աշխատակազմ	Պահպանման ծախսեր	ԱՄՀ
1162	«Գիտական և գիտատեխ նիկական հետազոտու թյունների ծրագիր»	133642	118709	14933	0	160370.4	118709	14933	26728.4	160370.4	118709	14933	26728.4	160370.4	118709	14933	26728.4	160370.4	118709	14933	26728.4
11013	«Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»	133642	118709	14933	0	160370.4	118709	14933	26728.4	160370.4	118709	14933	26728.4	160370.4	118709	14933	26728.4	160370.4	118709	14933	26728.4

Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տարրերի

Ծրագրային դասիչը		Ծրագիր /Միջոցառում	Գործառական դասակարգման			2018թ փաստ. (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ.դրամ)	2020թ բյուջե (հազ.դրամ)	2021թ բյուջե (հազ. դրամ)	2022 թ բյուջե (հազ. դրամ)
			Բաժին	Խումբ	Դաս					
162		«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»	X	X	X	133642	160370.4	160370.4	160370.4	160370.4
	11013	«Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»	08	02	01	133642	160370.4	160370.4	160370.4	160370.4

Հավելված N 7. Պետական մարմնի և դրա ենթակա կազմակերպությունների ստացվելիք եկամուտների աղբյուրները (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների)

(հազար դրամներով)

Եկամուտների ստացման աղբյուրների անվանումները	Փաստացի ըստ 2018 թվականի տարեկան հաշվետվության	2019 թվականի սպասողական	Կանխատեսում		
			2020թ.	2021թ.	2022թ.
ԸՆԴԱՄԵՆԸ	1295	1295	1295	1295	1295
այդ թվում՝					
1. Վճարովի ծառայությունների մատուցումից և աշխատանքների կատարումից՝	1295	1295	1295	1295	1295
2. Ստացվող նվիրատվություններից					

Հավելված N 10. Ամփոփ ֆինանսական պահանջներ ՄԺԾԾ ժամանակահատվածի համար

Աղյուսակ 1. Ծրագրերի և միջոցառումների գծով ամփոփ ֆինանսական պահանջներ 2020-2022 թթ համար

Ծրագրային դասիչը		Ծրագրի/միջոցառման անվանումը	Գոյություն ունեցող պարտավորությունների գծով հաշվարկված (ճշգրտված) ծախսերը (հազ. դրամ)			Ծախսային խնայողության գծով ամփոփ առաջարկը (հազ. դրամ) (-)			Նոր նախաձեռնություններ (հազ. դրամ) (+)			Միջոցառման գծով ամփոփ ծախսերը (հազ. դրամ)		
Ծրագիր	Միջոցառում		2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ	2020թ	2021թ	2022թ
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ														
1162		«Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր»	160370.4	160370.4	160370.4							160370.4	160370.4	160370.4
	11013	«Գիտատեխնիկական գրադարանային ծառայություններ»	160370.4	160370.4	160370.4							160370.4	160370.4	160370.4
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ (շարունակական բնույթի)														
		<Ծրագրի անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
Հայեցողական ծախսերին դասվող այլ միջոցառումներ														
		<Ծրագրի անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												
		<Միջոցառման անվանումը>												

Աղյուսակ 2. Հայտով ներկայացված՝ 2020-2022թթ ընդհանուր ծախսերի համեմատությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի և 2019-2021թթ. ՄԺԾԾ հետ

(հազար դր.)

	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
1. Պետական մարմնի գծով 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման ընդհանուր կողմնորոշիչ չափաքանակները	X	160370.4	160370.4	160370.4
2. <<ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով պետական մարմնի գծով սահմանված ընդհանուր հատկացումները	160370.4	X	X	X
3. Ընդամենը հայտով ներկայացված ընդհանուր ծախսերը՝ 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (տող 3.1 + տող 3.2 + տող 3.3.)	X	160370.4	160370.4	160370.4
3.1 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունների գնահատում 2020-2022 թթ. ՄԺԾԾ համար (առանց ծախսային խնայողությունների վերաբերյալ առաջարկների ներառման)	X	160370.4	160370.4	160370.4
3.2 Ծախսային խնայողությունների գծով առաջարկները (-) նշանով	X			
3.3 Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	X			
4. Տարբերությունը ՀՀ 2019թ. պետական բյուջեի համապատասխան ցուցանիշից (տող 3 - տող 2)	X	160370.4	160370.4	160370.4
5. Տարբերությունը 2019-2020 ՄԺԾԾ-ով հաստատված և 2022թ. համար սահմանված ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներից (տող 3-տող 1)	X	0	0	0

Հավելված N 12

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

ՀՀ կառավարության մշակութային քաղաքականությունը մշակվում է ոլորտի պետական լիազոր (գլխադասային) մարմնի՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից: Վերջինիս ասառաքելություններից է մշակութային շարժական ժառանգության հաշվառման, գիտական ուսումնասիրության, համալրման, հանրահռչակման և պահպանության պայմանները ժամանակակից տեխնիկական պահանջներին համապատասխանեցման գործառույթների իրականացումը, որը մասնավորապես կյանքի է կոչվում պետբյուջեից ֆինանսավորվող 15 գրադարանների միջոցով §Գրադարանային ծառայություններ¦ ծրագրի շրջանակներում: Ոլորտը կարգավորվում է ՀՀ «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքներով և մի շարք նորմատիվ-իրավական փաստաթղթերով:

Համաձայն պետական վիճակագրության վերջին տվյալների /2018թ./ ՀՀ-ում գործում է 730 գրադարան, որից՝ 123-ը քաղաքներում, 572-ը գյուղերում: Գրքային հավաքածուն կազմել է 10,9մլն. օրինակ առանց արտոնագրային ֆոնդի, այդ թվում քաղաքային – 4,9մլն., իսկ գյուղական – 4,2 մլն.: Ընթերցողների թիվը կազմել է 420,439 հազ. մարդ, այդ թվում քաղաքային – 188,322հազ., իսկ գյուղական – 144,515 հազ.: Փաստաթղթերի տացքը կազմել է՝ 7,1մլն. օրինակ, գրքային ֆոնդը մեկ գրադարանի հաշվով՝ 14.9 հազ. օրինակ, գրքային ֆոնդը մեկ ընթերցողի հաշվով՝ 25,8 օրինակ, ընթերցողների թվաքանակը մեկ գրադարանի հաշվով՝ 575,9 մարդ, տացքը մեկ ընթերցողի հաշվով՝ 16,9 օրինակ:

Գիտական և գիտատեխնիկական գրադարանների ցանցը ընդգրկում է 82 գրադարան, որոնցից 34-ը ճյուղային ԳՀԻ-ների և արդյունաբերության տարբեր ոլորտների ձեռնարկությունների գրադարաններ, 31-ը ՀՀ ԳԱԱ-ի համակարգի գրադարաններ և 17-ը ԲՈՒՀ-երի գրադարաններ: Վերջիններիս տեղեկատվական ռեսուրսները ձևավորվում են հաշվի առնելով ճյուղային և տարածաշրջանային առանձնահատկությունները: Ստորև ներկայացվում են պետ. բյուջեից սուբսիդավորվող չորս խոշոր գրադարանների հիմնական ցուցանիշները.

	ՀՀ Ազգային գրադ.	ՀՀ ԳԱԱ-ի Հիմնարար գրադ.	ՆԶԱԿ-ի ԳՏԳ	Հանրապ. Բժշկագիտ. գրադ.	Ընդամենը	Միջին ցուցանիշը
Գրքային հավաք.	6509136	3052084	21920202	552567	32033989	8008497.25
Ընթ.թիվը	29900	17000	6764	6790	60454	15113.5
Տացքը	1545671	493300	166979	88861	2294811	573702.75
Հաճախում	267189	226100	13402	52803	559494	139873.5
Գրադ.աշխ. թիվը	352	56	49	24	481	120.25
Ֆին. միջոց. /Պետ.բյուջե/	574442400	133717300	143047500	37946500	889153700	222288425

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

- Դեռևս խնդիր է տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի արդիականացումը և շահագործումը գրադարանային գործում, մասնաճյուղերի ընդգրկմամբ միասնական տեղեկատվական շտեմարանների ստեղծումը:
- Կարևորվում է գրադարանային հավաքածուների պահպանումը և օգտագործումը՝ դրանց վերականգնումը, նպատակային համալրումը, դիտանցումների իրականացումը, հնատիպ գրքերի, հին մամուլի և եզակի գրքանմուշների թվայնացումը:
- Հրատապ է տարածաշրջանային մասնաճյուղերում գրադարանային-տեղեկատվական ծառայությունների մատուցման արդիականացումը, ապակենտրոնացումը, ակտիվացումը և մատչելիության ապահովումը, միջգրադրանային կապերի և բաժնույթի ծառայության զարգացումը:
- Անհրաժեշտություն է գրադարանի գործունեության համար բարենպաստ պայմանների ապահովումը՝ շենքերի հիմնանորոգման ու վերանորոգման, անվտանգության, ջերմախոնավային համակարգերի ձեռք բերման ու տեղակայման, ժամանակակից տեխնիկական միջոցներով վերազինման ճանապարհով:
- Գրադարանը դեռևս ամբողջապես ապահովված չէ գրադարանային գործունեության արդի պահանջներին համահունչ մասնագիտական գիտելիքներ ունեցող անհրաժեշտ կադրերով: Սկսված է կանոնակարգման գործընթացը, որով կսահմանվեն կադրերին ներկայացվող մասնագիտական և ծառայողական պահանջները և գրադարանային գործընթացների կառավարման խնդիրները:
- Կարևորվում է մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը՝ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների կատարելագործմամբ, IFLA-ի (Գրադարանների և գրադարանային աշխատակիցների միջազգային ասոցիացիա) կողմից մշակված գրադարանային աշխատակիցների վարքագծի կանոնների, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ:
- Ժամանակակից գիտության և տեխնիկայի արդյունավետ զարգացումը պահանջում է գիտնականների և բոլոր շահագրգիռ անձանց համար հասանելիության առավել մեծ հնարավորություններ՝ գիտական շրջանակների կողմից թողարկված տեղեկատվության աղբյուրներից օգտվելու առումով: Ժամանակակից գիտության և տեխնիկայի ասպարեզում անհրաժեշտ է ընդգծել գիտելիքի և տեղեկատվության համատեղ օգտագործման և տարածման գործընթացների կարևորությունը:
- Անհրաժեշտ է նաև ապահովել տարբեր աղբյուրներից տեղեկատվության կուտակման ավտոմատացումը, ինչը ենթադրում է իրականացված գիտական հետազոտությունների տեղեկատվական համակարգերի տվյալների ինտեգրում:
- Հրատապ է աջակցելը տեխնոլոգիաների և գիտելիքի փոխանցմանը՝ այդ թվում օգտագործելով Սփյուռքի ներուժը և կապերը:
- Խնդիր է շուկայական հարաբերությունների կարգավորումը, այդ թվում՝ հեղինակային իրավունքի պահպանության մեխանիզմների ապահովումը:
- Կարևորվում է գրադարանների ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնումը:

Ոլորտի հիմնական թիրախներն ու նպատակներն առնչվում են անհատի և հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման պայմանների ապահովմանը, գիտության և մշակույթի ոլորտում պետական աջակցության ցուցաբերմանը, իրավական հիմքերի մշակմանը, գիտատեխնիկական տեղեկատվական ժառանգության պահպանությանը, պաշտպանությանը, ուսումնասիրությանը, տարածմանը, միջմարզային համագործակցության զարգացմանը, մշակույթի ապակենտրոնացման քաղաքականության շարունակականության ապահովմանը, մշակութային միջոցառումների իրականացմանը, գիտելիքահենք տնտեսության ձևավորման, նորամուծության և ձեռներեցության զարգացման համար բարենպաստ տեղեկատվական միջավայրի աջակցմանը, գիտության և տեխնիկայի բնագավառում նշանակալից նվաճումների տարածմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, արտերկրում հայկական գիտությունն ու մշակույթը

արժանավայել ներկայացնելուն, տեղորոշմանն ու հանրահռչակմանն ուղղված ծրագրերին, երկրում աղքատության հաղթահարման աջակցմանը, հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի արդյունավետ օգտագործմանն ու զարգացմանը, ազգային ինովացիոն համակարգում ընդգրկված համապատասխան ենթակառուցվածքների տեղեկատվական աջակցմանը, գիտության և արտադրության ինտեգրմանն ու միջազգային գիտատեղեկատվական ծրագրերում ներգրավմանը:

Վերը նշված թիրախային խնդիրների իրականացումն ուղղված կլինի ՀՀ կառավարության 27.05.2014 թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» կենսագործմանը (Տես՝ ՀՌԾ, 488-րդ, 506-րդ, 508-րդ, 509-րդ, 513-րդ, 514-րդ և 518-րդ կետերը), ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշումով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի» իրականացմանը (Տես՝ էջ 34), «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ, որոշման և ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի համապատասխան դրույթներից բխող գործառույթների ապահովմանը :

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով գերատեսչության հիմնական նպատակները և գերակայությունները՝ 2020-2022թթ. ողջ ժամանակահատվածում առաջնահերթությունը կտրվի շարունակական աշխատանքների հետևյալ ուղղություններին.

- գիտատեխնիկական գրադարանի պահպանման և համապատասխան գրականության ձեռք բերման միջոցով ավանդական գրադարանային-տեղեկատվական ծառայությունների, գրականության նպատակային ցուցահանդեսների կազմակերպում, կադրերի վերապատրաստում,
- գրադարանային ֆոնդերի էլեկտրոնային գրացուցակի ձևավորման, համապատասխան տվյալների բազաների գեներացման միջոցով փաստաթղթերի էլեկտրոնային առաքման ծառայության կազմակերպում: Համապատասխան միջազգային տվյալների բազաներ մուտքի ապահովում,
- վեբ-կայքի գործարկման միջոցով գրադարանային ծառայությունների մատչելիության ապահովում և հանրայնացում: Նորամուծության և ձեռներեցության լայն շրջանակներին, գիտատեխնիկական հանրությանը և կառավարման օրգաններին օպերատիվ լրատվության ապահովում, տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունների մատուցում:

Ստորև ներկայացվում են շարունակական աշխատանքների կատարման կանխատեսվող արդյունքները, որոնք կնպաստեն վերը նշված ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացմանը: Դրանք են՝

- շահառուների պահանջարկին համապատասխան ձեռք բերված և պահպանման տրված գիտատեխնիկական գրականության միջոցով սպասարկված, ինչպես նաև բազմաբնույթ միջոցառումների մասնակցած գիտատեխնիկական հանրություն, գործարարներ, կենսաթոշակառուներ, ձեռնարկություններ և այլն,
- մասնաճյուղերի ներգրավմամբ ապակենտրոնացված տեղեկատվական սպասարկում: Վերապատրաստման մասնակցած գիտատեխնիկական գրադարանների և մասնաճյուղերի գրադարանավարներ,
- փաստաթղթերի վերլուծական-սինթետիկ մշակման ենթակա և դրանց դասակարգման ու խորագրման աշխատանքների կենտրոնացման շնորհիվ էլեկտրոնային առաքման ծառայության միջոցով սպասարկված, ինչպես նաև միջազգային տվյալների բազաներից օգտված կոլեկտիվ բաժանորդներ, կառավարման օրգաններ և առանձին ֆիզիկական անձինք,

- պրոբլեմային ուղղվածության մասնագիտացված ՏԲ-ների ձևավորման, համապատասխան տեղեկատվական-խորհրդատվական ծառայությունների արդյունքում սպասարկված ինովացիոն գործընթացներում ընդգրկված գյուտարարներ, մասնագետներ, գիտնականներ, գործարարներ, ընկերություններ և այլն: Կենտրոնի վեբ կայքի գործարկման շնորհիվ մատուցվող ծառայությունների ընդլայնված աշխարհագրություն ՀՀ տարածքով:

Գոյություն ունեցող ծրագիրը անմիջականորեն առնչվում է գրադարանային գործին և իրականացվելիք ծախսերը հաշվարկելիս հաշվի են առնվել ՀՀ 2019-2021թթ. պետական ՄԺԾԾ-ով հաստատված ծախսերի ոլորտային գերակայությունները, 2019-2021թթ. առանցքային մակրոտնտեսական ցուցանիշները.

- Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում ամրագրված (Տես՝ ՀԶԾ, 368-րդ և 500-րդ կետերը) ընդհանուր սոցիալական խնդիրներին ու նպատակներին համահունչ մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձի բարձրացումը:
- Ծառայությունների սակագների աճը՝ պայմանավորված ձեռք բերվող գրականության մեկ միավորի գնի, և ապրանքների ու ծառայությունների գնաճով:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Գոյություն ունեցող ծրագրի գծով 2020-2022թթ. ՄԺԾԾ ժամանակահատվածում իրականացվելիք ամփոփ ծախսերը ներկայացված են աղյուսակում՝

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածի անվանումը	Միջոցառման գծով հաշվարկված ծախսերը (հազ. դրամ)		
	2020թ	2021թ	2022թ
Աշխատավարձ	118709	118709	118709
Գրականության բաժանորդագրություն	3000	3000	3000
Պահպանման ծախսեր	11933	11933	11933
Հարկեր (ԱԱՀ)	26728.4	26728.4	26728.4
Ընդամենը	160370.4	160370.4	160370.4

Հղումներ՝ ՀՀ կառավարության 27.05.2014 թ. «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր (Տես՝ ՀԶԾ, 488-րդ, 506-րդ, 508-րդ, 509-րդ, 513-րդ, 514-րդ և 518-րդ կետերը), ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշումով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագիր» (Տես՝ էջ 34), «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018-2022 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 6-ի N 1030-Լ որոշում և ՀՀ 2019-2021թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագիր: